ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«04» փետրվարի 2015թ. N 05

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 145 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության <<Ճանապարհային ոստիկանություն>> ծառայության պետի 2015 թվականի հունվարի 27-ի N 17-7-997 գրությունը.

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2009 թվականի հոկտեմբերի 26-ի «Մրցութային հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2007 թվականի սեպտեմբերի 12 N 110 կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 145 կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) կարգադրության 2-րդ կետում՝

ա. «Ճանապարհային ոստիկանության հաշվառման-քննական և տրանսպորտային միջոցների տեխնիկական փորձաքննության բաժնի ՀԿՀ ավագ տեսուչ, ոստիկանության փոխգնդապետ Ա.Յու.Փարսադանյանին>> բառերը փոխարինել <<Ճանապարհային ոստիկանության Արմավիրի հաշվառման-քննական բաժանմունքի տեսուչ, ոստիկանության կապիտան Կարեն Օհանյանին>> բառերով.

բ. <<Ճանապարհային ոստիկանության Արմավիրի հաշվառման-քննական բաժանմունքի տեսուչ, ոստիկանության կապիտան Կարեն Օհանյանին>> բառերը փոխարինել <<Ճանապարհային ոստիկանության Արմավիրի հաշվառման-քննական բաժանմունքի տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Նորիկ Գևորգյան>> բառերով:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ